2048
ա

ՀԱՇԻՒ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔԻ ՎԱՆԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

1914-15 թթ.

НАХИЧЕВАНЬ н Д.
Типографія С. Я. Авакова

Ն.-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան Ս. Յ. Աւագեանի

13163

13163

Նոր-Նախիջևանի Սուրբ Խաչ վանքի Վանական Կառավարութիւնը՝ բոլորելով իւր գործունէութեան վեցերորդ տարեշրջանը, կանոնադրութեան 11-րդ յօդուածի համաձայն՝ պատիւ ունի ներկայացնելու պատգամաւորական ընդհանուր ժողովի քննութեանն ու հաստատութեանը 1914-15 թ. ել և մուտքի ու գործունէութեան հաշիւը այլ և կանոնադրութեան 10-րդ յօդուածի համաձայն՝ առաջիկայ 1916 թուի ել և մուտքի մօտաւոր նախահաշիւը։

20448
Ш
ՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1914 թ.

Վանակ. Կառավարութեան 1914 թ. կազմը.

Համաձայն Վանական Կառավարութեան կանոնադրութեան յօդ. 5-ի կառավարութեան ժողովները 1914 թ. նախագահել է ի Տէր հանգուցեալ Տ. Վահան վարդապետը։ Կառավարութեան անդամներն էին բարձ. Տ. Գէորգ վարդապետը (մօտ կէս տարի) և պ. պ. Շապոշնիկեան Յովհաննէս, Դերիջանեան Աբգար և Սագիրեան Յովակիմ. անձնափոխանորդ՝ Շապովալեան Մարտիրոս։ Հաշուեքննիչներ՝ պ.պ. Ալլահվերդեան Մանուկ, Խամբուրեան Յովակիմ և Զաթալբաշեան Սերովբէ։

Ժողովների զբաղմունքները.

1914 թուականի ընթացքում Վանական Կառավարութիւնն ունեցել է երեք ժողով և զբաղուել է հետևեալ խնդիրներով՝—քննութեան առել պարտէզի, քարահանքի և հողերի մի մասը մի քանի տարով կապալով տալու խնդիրները և դրական որոշումներ արել. ստուգել է Կառավարութեան հաշուեմատեանները; ~~կազմել է 1915 թ. նախահաշիւը~~։

1915 թ.

Վանակ Կառավար. նոր կազմը.

1914 թ. հոկտեմբերի 12-ին հրաւիրուած պատգամաւորական ընդհանուր ժողովի կողմից ընտրուած Վանական Կառավարութեան նոր կազմը իւր հաստատութիւնը ստացաւ թեմիս դեր. Առաջնորդի կողմից նոյն թուի դեկտեմբերի 13-ին համար 477 գրութեամբ։ Կառավարութեան նոր անդամներն են՝ պ.պ. Դերիջանեան Աբգար, Զապովալեան Մարտիրոս, Շապոշնիկեան Յովհաննէս և Սալթիքեան Անդրէաս. անձնափոխանորդներ՝ Զաթալբաշեան Սերովբէ և Սագիրեան Յովակիմ. Վերատեսուչ Յանձնաժողովի անդամներ՝ պ.պ. Ալլահվերդեան Մանուկ, Սուպաշիեան Գասպար և Քիստեան Յովակիմ։

Հաշուետուութեան տարուայ մէջ Վանական Կառավարութիւնն ունեցաւ մի ծանր կորուստ յանձին իւր նախագահ Տ. Վահան վարդապետի, որ կարճատև հիւանդութիւնից յետոյ յուլիսի 17-ին փոխեցաւ ի Տէր։ Հանգուցեալն արդէն վերջին տարիներս ենթակայ լինելով յաճախ կրկնուող տկարութեան, դժուարանում էր Կառավարութեան գործերը վարել նախկին կորովով և այդ

լոկ պատճառով Կառավարութիւնն զրկուած էր նիստեր գումարելու հնարաւորութիւնից, ուստի թէ 1914 թ. վերջին ամիսների և թէ 1915 թ. առաջին կիսամեակի հաշիւները մնացել էին առանց վերստուգութեան։ Երբ որ հանգուցեալի տկարութիւնը սաստկացաւ, Հոգևոր իշխանութեան հսկողութեամբ հանգուցեալի բնակարանը կնքուեցաւ և գործերն անցան Ն.-Նախիջևանի Հոգևոր Կառավարութեան ձեռքը, մինչև որ եկաւ նորահաստատ վանահայր Տ. Մուշէ վարդապետը և օգոստոսի 12-ին ստանձնեց վանքի գործերը։

Ժողովների զբաղմունքը

Կառավարութիւնն 1915 թ. ընթացքում, սկսած օգոստոսի 30-ից, ունեցել է հինգ ժողով՝ 8-10 նիստով, ուր քննութեան առնուել ու որոշումն են ստացել զանազան խնդիրներ, որոնց մէջ յատկապէս ջանք է գործ դրուել վանքապատկան ազատ հողաբաժինները աճրդով տալու համար. ստուգել են կառավարութեանս 1914 թ. վերջին ամիսների և 1915 թ. 10 ամիսների հաշիւները, կազմուել է ուրուագիծ նախահաշուի 1916 թուի համար, քննութեան են առնուած պարտէզը նորից կապալով տալու և քարահանքի կապալառուի խնդիրները, խորհրդակցութեան առարկայ է եղել նաև վանքի պարտապանների հարցը։

Ներկայացնելով 1914 և 1915 թթ. հաշիւները և 1916 թ. նախահաշիւը, Կառավարութիւնս աւելորդ չէ համարում մատնանշել մի քանի հանգամանքների վրայ։

1914 թ.-ի բացը.

Համաշխարհային պատերազմը, բնականաբար, պիտի մեծապէս ազդէր նաև կառավարութեան հոգատարութեանն յանձնուած վանքի վրայ՝ մի կողմից պակասեցնելով եկամտի աղբիւրները, իսկ միւս կողմից աւելացնելով ծախքերը։ Ինչպէս հաշուից երևում է, 1914 թ. ընթացքում վանքն ունեցել է 10,377 ր. 38 կ. մուտք, իսկ 15,052 ր. 37 կ. ելք, այսինքն 4,674 ր. 99 կ. բաց է ունեցել, որը ծածկուել է վանքապատկան ծախսելի գումարից։

Եթէ վանքի 1914 թ. հաշիւների մէջ առաջ եկած բացի պատճառներից մէկն է տարուայ անյաջող պայմանները, միւս կողմից էլ դրան նպաստել են մի քանի խոշոր ծախսեր, ինչպէս են տրուած նպաստները՝ Դպրանոցին 4,400 ր., Ուսումնարանական Ֆոնդին՝ 1,000 ր., Գէորգեան Ճեմարանին՝ 500 ր., Հայկական Լազարեթին՝ 490 ր., նորոգութեան վրայ գործ դրուած 3,300 ռուբլին։

1915 թ.-ի բացը.

Նիւթական կողմից աւելի անբարեպատեհ հանգամանքների մէջ է գտնուում վանքի տնտեսական վիճակը 1915 թուականին, որը անշուշտ ազդելու է նաև 1916 թ. տնտեսական դրութեան վրայ։

Ինչպէս յայտնի է, վանքի եկամտի գլխաւոր աղբիւրը կազմում է հողը, որը տարէց տարի փոքրիկ բաժիններով տրւում էր գիւղացիներին կապալով այնպիսի հաշուով, որ իւրաքանչիւր հողաբաժին երկու տարի ժշկութեան ենթարկուելուց յետոյ երրորդ տարին թողնւում է հանգստանալու։ 1915 թ. աշնանը կապալով տալու համար կար ազատ մնացած 285 դեսեատին 212 քառ. սաժէն վարելահող, որից 196 դ. 1936 ք. ս. արդէն մի տարի հանգստացած հող է, իսկ 88 դ. 676 ք. ս.-ը՝ պիտի ցանուի երկրորդ տարին։ Կառավարութիւնս երկու անգամ աճուրդ նշանակեց, սակայն շատ քիչ կապալառուներ եկան, ուստի և հողերի մի մասը մնաց առանց պահանջի, իսկ միւս մասն էլ չափազանց ածան գնացած լինելու պատճառով Կառավարութիւնս բարւոք համարեց աճուրդները չը հաստատել և որոշեց ազատ մնացած հողի այն մասը, որ արդէն հանգստացած է, մասամբ մշակել սեփական միջոցներով կամ ընկերութեամբ գիւղացոց հետ եթէ միայն հնարաւորութիւն լինի այդ անելու, իսկ միւս մասը թողնել հանգստանալու՝ իբրև խոտատեղի։

Եւ, անհաւասիկ, տարուայ ձախորդ հանգամանքների շնորհիւ Կառավարութիւնս 1915 թուի հաշիւները փակում է նոյնպէս բացով, որը թէպէտ ըստ երևոյթին մեծ գումար չէ, ընդամենը 126 ր. 53 կ., սակայն ի նկատի պէտք է առնել, որ 1915 թուին ուղարկուած չէ 1,000 ր. նպաստ Դպրոցական Ֆոնդին և 500 ր. Գէորգեան Ճեմարանին. բացի այդ, Կառավարութիւնս 1915 թուականից ունի անվճար թողած 500 ր. պարտք։ Այդ ամենը որ ի նկատի առնուի, Կառավարութիւնս 1915 թուի բացը կը դառնայ մի բաւական պատկառելի գումար։ Իսկ այդ բացի պատճառներից մի քանիսը սրանք են.— Ա. Վանքապատկան հողաբաժինները մնացին առանց կապալառուի, ուստի և դրանցից ակնկալեալ եկամտի կէսը որ պէտք է մուտք գրուէր 1915 թուին, պակասեց մուտքի աղբիւրից։ Բ. Կառավարութիւնս մտնելով վանքի բարահանքի կապալառու Հ. Ի. Սվիրեպոլօի դրութեան մէջ, որ մի ամբողջ տարի քարհանքը թողել է առանց օգտագործելու և ցայսօր նոյն վիճակի մէջ էլ շարունակում է մնալ թէ քարի պահանջ և թէ աշխատաւոր ձեռքեր չը լինելու պատճառով, որոշեց զիջել նրա խնդրքին և 1915-16 կապալաշրջանի համար ստանալ 600 ր., փոխանակ 1,000 ռուբլու։ Գ. Միևնոյն կերպով ի նկատի առնելով վանքի պարտէզի կապալառու ա. Մ. Քայալեանի հանգամանքները, որ շարունակում էր, թէպէտ դժուարութեամբ, կանոնաւոր կերպով վճարել ոչ միայն պարտէզի կապալավարձը, հապա և իւր հանգուցեալ ամուսնու պարտքը, որոշեց պահանջել նրանից պարտքի իբրև վերջին մնացորդ այլ ևս 200 ր. և այդպիսով հաշիւները փակուած համարել։

Միւս կողմից էլ աւելացան Կառավարութեանս ծախսերը։ Այսպէս 1915 թ. ընթացքում ևս Կառավարութիւնս շարունակում էր Հայկական Լազարեթին տուած նպաստը՝ երկու մահճակալ պահելու նպատակով. սակայն ի նկատի առնելով մի կողմից վանքի նիւթական նեղսակիր վիճակը և միւս կողմից Լազարեթի ունեցած ոչ այնքան սակաւաղական պէտքերը Վ. Կառավարութիւնս որոշեց 1915 թ. սեպտեմբերից յետոյ դադարեցնել նպաստի տուչութիւնը։

Կառավարութեանս վրայ ծանրացան նաև հանգուցեալ Վահան վարդապետի հիւանդութիւնն ու մահը. այդ առթիւ եղել է 630 ռուբլուց աւելի ծախս, որը սակայն Կառավարութիւնս որոշել և դիմել է տեղւոյս փոխանորդ Տ. Գէորգ վարդապետին խնդրելով այդ գումարը վերադարձնել Կառավարութեանս, քանի որ հանգուցեալից յետոյ դանադան բանկերում մնացել են նրան պատկանեալ բաւական խոշոր գումարներ։

Ստանալիք եւ տալիք

Կառավարութիւնս 1915 թուականից անվճար թողած հաշիւներ ունի մօտաւորապէս հինգ հարիւր ռուբլու։ Սակայն դրա դիմաց ունի նաև ստանալիք գումարներ, գլխաւորապէս գիւղացիներից և այն մեծ մասամբ նախընթաց տարիներից մնացած։

Այսպէս ստանալիք կայ 1909-10 թուականից 78 ռ. 10 կ., 1910-11 թուից՝ 193 ռ. 75 կ., 1912-13 թուից՝ 57 ռ. 32 կ., 1913-4 թուից՝ 1813 ռ. 47 կ., 1914-5 թուից՝ 105 ռ. 15 կոպէկ, ընդամենը 2,247 ռ. 79 կ., որից 2,000 ռ. յուսալի է ստանալ։ Կառավարութիւնս քանիցս խորհրդակցել է այդ խնդրի շուրջ և դիմել է պարտապաններին առաջարկելով գալ և իրենց հաշիւները յարդարել. ոմանք եկել են և պարտքի գոնէ մի մասը վճարել, բայց ոմանք նոյն իսկ չեն հաճել պատասխանելու։ Այդպիսիների վերաբերմամբ Կառավարութիւնս հարկադրուած է դատի դիմելու։

Անյուսալի պէտք է համարել նաև վանքի բանջարանոցի նախկին կապալառու Ցիմբերզի 395 ռ. պարտքը (թէպէտ 500 ռ. բանկ-վեկսիներ կան), քանի որ նա ներկայումս բոլորովին գուրկ երկու աչքի տեսութիւնից, անընդունակ է աշխատանքի, ոչ մի կայք ու գոյք չունի, և ինչ որ կայ, կնոջ սեփականութիւնն է, որի աշխատանքով էլ ապրում է նա։

Պահեստի եւ նորոգութեան գումարներ

Հոմանային Վան. Կառավարութեանս Կանոնադրութեան տրամադրութեան և պատգամաւորաց ժողովի որոշման, 1909 թուականից ի վեր կազմւում է պահեստի գումար և հիմնական նորոգութեան գումար, որոնց վրայ ամենայն տարի աւելացւում է նոյն տարուայ ընդհանուր եկամտի տասնաս %-ը։ Այսպիսով գոյացած էր առ 1-ն յունվ. 1914 թ. պահեստի գումար, ընդամենը 16,061 ռ. 84 կ.։ Դրա դիմաց առ 1-ն յունվ. 1914 թ. բանկերում եղել է վանքապատկան 22,822 ռ. 99 կ. գումար, որը սակայն առ 1-ն յունվ. 1915 թ. դարձել է 1',118 ռ. 72 կ., իսկ ապա պակասել է աւելի ևս, որովհետև այդ գումարից հանգուցեալ վանահայր Վահան վարդապետը հարկադրուած է եղել 1915 թ. ընթացքում վերցնել այլ ևս 900 ռուբլի ընթացիկ ծախքերը ծածկելու համար։

Նալբանդեան—Պատկանեանի գումար.

Վանական Կառավարութեանս ձեռին գտնւում է նաև Նալբանդեան—

Պատկանեանի արձանները պատշաճաւոր դրութեան մէջ պահելու համար յատկացուած մի գումար, որը սակայն անձեռնմխելի է մնում, մինչև որ այդ գումարը շահեցուելով դառնայ 1,000 ռուբլի, որից յետոյ միայն %-ը գործ պիտի դրուի իւր նպատակին. իսկ մինչ այդ, արձանների պատշաճ դրութեան պահպանելը կատարւում է վանքի միջոցներով։ Այդ յատուկ գումարը առ 20-ն յունուարի 1916 թ. դարձել է 671 ռ. 62 կ.։

Վանքի կապալառուները

Վ. Կառավարութիւնս իւր իրաւասութեան տակ գտնուած կալուածների մի մասը որոշ տարով և հաստատուն պայմաններով տուած է կապալով։ Կապալառուներն են.

Ա. Բժ. Բ. Տրապիզոնցեան, որ ահա 17 տարի է կապալով վերցնում է վանքի հողերից դանադան մասեր և ունի հաստատուն կաթնատնտեսարան։ Նրա հետ վերջին անգամ պայման կապուած է 1915 թ. ապրիլի 11-ին, որի զօրութեամբ բժ. Տրապիզոնցեանին կապալով տրուած է վանքապատկան №№ 29, 40, 41 հողաբաժինները, ընդամենը 30 դեսեատին և 834 քառակուսի սաժէն տարածութեամբ, 12 տարի ժամանակով, դեսեատինը 15 ռ. տարեկան վարձագնով։ Բացի դրանից Կառավարութիւնս բժ. Տրապիզոնցեանին տալիս է նաև 100—150 դեսեատին տեղ այն հողերից, որոնք թողնւում են հանգստանալու նպատակով, տարեկան 8 ռ. վարձով դեսեատինին։ Կապալավարձը ստացւում է իւրաքանչիւր կէս տարին մի անգամ, կանխաւ, այսինքն սեպտ. 1-ին և մայիսի 1-ին։ Բժ. Տրապիզոնցեանը իրաւունք ունի №№ 29, 40, 41 հողաբաժինների վրայ շէնքեր կառուցանելու և 10 դեսեատին տեղ ցան անելու, իսկ միւս հողերի վրայ իրաւունք ունի 12 տարուայ պայմանամիջոցն աւարտելուց յետոյ նորից 8 տարով նորոգելու կապալը։

Բ. Առևտրական տուն «Ֆ. և Բ. Ռամմը» երկու պայման ունի կապած. մէկը կապուած է 1909 թ. յունուարի 2-ին, որով նա տնկարանի համար վերցրել է մի հողաբաժին 22 դես. տարածութեամբ, 9 տարի ժամանակով, դեսեատինը 35 ռ. վարձով տարեկան, իսկ միւսը կապուած է 1912 թ. սեպտեմբերի 11-ին, որով նոյնպէս տնկարանի համար վերցրել է մի ուրիշ հողաբաժին 11 դ. 240 կ. ս. տարածութեամբ, եօթը տարով, տարեկան 45 ռ. վարձով իւրաքանչիւր դեսեատինը։ Կապալավարձը ստացւում է ամեն կիսամեակինը առաջուց։

Գ. Ստ. Գր. Ակսենովը 1913 թ. փետրուարի 25-ին կապած պայմանով տնկարանի համար վերցրել է վանքապատկան մի հողաբաժին, քարահանքի ու Տեմերնիկի մէջ տեղում, մօտ 10 դեսեատին տարածութեամբ, տասը տարի ժամանակով, տարեկան 150 ռ. վարձատրութեամբ առաջին 5 տարին և 200 ռ. վարձատրութեամբ երկրորդ 5 տարին։ Կապալավարձը ստացւում է առաջուց։

Դ. Թոդոր Նիկ. Մաժանկովը 1914 թ. հոկտեմբերի 26-ին կապած պայ-

մանով վերցրել է վանքապատկան 10 դ. 1,440 ք. ս. տարածութիւն ունեցող բանջարանոցը 2 տարի ժամանակով, տարեկան 450 ր. վարձով. կապալավարձը վճարում է ամեն կիսամեակին առաջուց։ Նա իրաւունք ունի օգտուելու նաև բանջարանոցի սահմաններում եղած եղեգնուտից, իսկ վանքն իրաւունք ունի տարեկան 25 ր. բանջար ստանալու ձրիապէս։

Ե. Կոնս. Իվ. Սվիրեպուլոն կապալով վերցրած ունի վանքի քարահանքը, երեք տարի ժամանակով, սկսած 1914 թ. մայսի 22-ից, տարեկան 1,000 ր. վարձով, փողը ամեն մի կիսամեակին առաջուց տալու պայմանով։

Զ. Տիկին Մ. Քայեալեանին տրւում է պարէզը միայն մէկ տարի ժամանակով, տարեկան 800 ր. կապալավարձով, որի կէսը նա պարտաւորում է վճարել առաջուց, իսկ մնացեալը երկու նուագում։

ՄՈՒՏՔ — ՏԱՐԵԿԱՆ

	Մնացորդ առ 1-ն յունուարի 1914 թ. քսան երկու հազար երեք հարիւր ութսուն եօթն ռուբ. 33 կ. որ կազմուած է հետեւեալ գումարներից				
	ա) Պահեստի գումար նախկին տարիների . .	6463	32		
	Պահեստի գումար 1913 եկամտի 10%-ը .	1567	60		
	բ) Հիմնական նորոգութեան ֆոնդ . . .	6463	32		
	Հիմնական նորոգ. ֆոնդ 1913 եկամտի 10%-ը	1567	60		
	գ) Մ. Նալբանդեանի և Ռ. Պատկանեանի արձանների նորոգութեան համար, անձեռնմխելի գումար	588	49		
	դ) Ծախսելի գումար	5737	—	22387	33
	1914 տարեշրջանում Ս. Խաչ վանքը ունեցել է մուտք				
1	Հողային ա) Աճրդով տրուած հողերից . . .	2164	30		
	բ) ըժ Բ. Տրապիզոնցեանից . . .	457	65		
	գ) Ռամմ առևտր. տնից . . .	1270	—		
	դ) Քարահանքից (Կ. Սվերիպուլօից) . .	1250	—		
	ե) Տնկարանի տեղից (Ակսիոնովից) .	150	—		
	զ) Բանջարանոցից (Թոդորովից) .	430	—		
	է) Պարտէզից (Քայալեանից) . . .	1400	—		
	ը) Գոգամոցից . . . ,	15	-		
2	Եկեղեցական և պատահական՝				
	ա) Ս. Խաչի և մեռոնի կնքահայրութեան, լուսագին և այլն	35	95		
	բ) Նուէրներ, մատաղի մորթ, զեռնախնձոր և այլ իրերի վաճառից	108	53		
	գ) Մոմավաճառութիւնից	1005	14		
	դ) Գանձանակատփերից . , . . .	30	17		
3	Ամարանոցի շէնքերից	1100	—		
4	%% պահեստի, նորոգութեան և ծախսելի գումարների				
	1913 թուականի . . .	1052	11		
	1914 թուականի . . .	960	64	11429	49
	Ընդամենը .			33816	82

1916 թուականի յունուարի 31-ին մենք ի ներքոյ ստորագրեալ հաշուետես շուեմատեանը ու հաշիւը և դատնք, որ հաշուեմատեանները վարած են ճիշտ և գումարներն ունին իրանց ապացուցագրերը։ Առ 1-ն յունուարի 1915 թ. մնա- 45 կ.), որից Ռոստ.-Նախիջ. Փոխադ. Վարկի Ընկեր. մէջ ընթացիկ հաշուով պահ 73 կ. (յատուկ գում. Մ. Նալբանդեանի և Ռ. Պատկանեանի արձանների պահպա- 53 կ. առձեռն դրամով գանուելիս է եղել վանահօր բարձրապատիւ Տ. Վահան

ՀԱՇԻՒ 1914 թ. — ԵԼՔ

	1914 հաշուետուութեան տարեշրջանում Ս. Խաչ վանքը ունեցել է ելք տասն և հինգ հազար յիսուն երկու ռուբ. 37 կոպ.				
1	Ռոճիկներ՝ ա) Վանահօր	600	—		
	բ) Ծառայողներին	1266	—		
	գ) Տօնական նուէրներ երգիչներին և ծառաներին	168	—		
2	Մնունդ՝ ա) վանահօր, ծառայողներին և հիւրերին .	871	66		
	բ) Կեր կենդանիներին . . .	333	10		
3	Դիւանական և եկեղեցական ժատեանների . .	74	36		
4	Այլ և այլ ծախք (պայտառին, կառքի, սառոյցի, փոստի օճառի, վառօդ, պատրօն, տակառ, ամանեղէն և այլն	525	89		
5	Վառելիք և լուսաւորութիւն	377	20		
6	Նորոգութեան (եկեղեցու, ծառաստանի, շէնքերի և այլն)	3413	92		
7	Մոմի և խունկի	356	50		
8	Օրավարձով աշխատողներին	165	53		
9	Մի կով . , ...	148	40		
10	Տելեֆոն, հողային հարկ, շէնքերի ապահովագրութեան	361	81		
11	Նպաստներ՝ ա) Թեմական դպրանոցին . . .	4400	—		
	բ) Դպրոցական ֆոնդին . . .	1000	—		
	գ) Գէորգեան ճեմարանին . . .	500	—		
	դ) Հայկական լազարէթին . . .	490	—	15052	37
	Մնացորդ առ 1-ն յունուարի 1915 թ.				
	Ռոստով-Նախիջևանի Փոխ. Վ. Ընկ. մէջ ընթ. հ. .	7600	87		
	Ն.-Նախիջ. Փոխ. Վ. Ընկ. մէջ ընթաց. հ. . . ,	10368	32		
	Ռոստովի Բ Փոխ. Վ. Ընկ. մէջ ընթ. հ. . . .	645	73		
	Առձեռն գումար վանահօր մօտ	149	53	18764	45
	Ընդամենը			33816	82

ներս քննեցինք վանական կառավարութեան մատեանները և 1914 թ. տարեկան հաշուեմատեանը, բոլոր մուտքերը եղած են համաձայն պայմանագրերի ծախսուած ցորդն է տասնութը հազար եօթը հարիւր վաթսուն չորս ռուբլի 45 կ. (18764 ռ. է տրուած 7600 ռ. 87 կ., Ռոստովի Բ Փոխ. Վար. Ընկ. մէջ ընթ. հաշուով 645 ռ. նութեան) և Ն.-Նախ. Փոխ. Վարկի ընկեր. մէջ 10368 ռ. 32 կ. իսկ մնացեալ 149 ռ. Վարդապետի մօտ, հաշուատեսներ Յովակ. Քիստեան և Մ. Աղրահմերտեան.

ՄՈՒՏՔ ՏԱՐԵԿԱՆ

	Մնացորդ առ 1-ն յունուարի 1915 թ. տասն և ութը հազար եօթ հարիւր վաթսուն չորս բուբլի 45 կոպ., որ կազմուած էր հետևեալ գումարներից				
	ա) Պահեստի գումար	6463	32		
	բ) Հիմնական նորոգութեան ֆոնդ	6463	32		
	գ) Մ. Նալբանդեանի և Ռ. Պատկանեանի արձանների նորոգութեան համար անձեռնմխելի գումար	645	73		
	դ) Ծախսելի գումար	5192	08	18764	45
	1915 թ. տարեշրջանում Ս. Խաչ վանքը ունեցել է մուտք				
1	Հողային՝ ա) Նախորդ տարիները աճրդով արուած հողերից	2890	57		
	բ) Բժ. Բ. Տրապիզոնցեանից	1639	—		
	գ) Ռամմ առևտրակ. տնից	1270	—		
	դ) Քարահանքից (Կ. Սվերիպուլոից)	600	—		
	ե) Տնկարանի տեղից (Ակսիոնովից)	150	—		
	զ) Բանջարանոցից (Թոդորովից)	545	—		
	է) Պարտէզից (Մ. Քայեալեանից)	600	—		
	ը) Գոգաճոցից	65	—		
2	Եկեղեցական և պատահական՝				
	ա) Ս. Խաչի և մեռոնի կնքահայրութեան, լուսագին և այլն	51	05		
	բ) Մատաղի մորթի, փայտ, կարտոֆիլ և այլ իրերի վաճառումից և պատահական մանր նուէրներ	308	25		
	գ) Մոմավաճառութիւնից	1092	71		
	դ) Գանձանակատփերից	37	37		
3	Ամարանոցային և այլ շէնքերից	1470	25		
4	Կաթ, մածուն, հաւկիթ	237	70	10956	90
	Ընդամենը			29721	35

1916 թ. յունուարի 31-ին մենք ներքոյ ստորագրեալ հաշուեքննիչներս քննեցինք որ հաշուեմատեանները վարած են ճիշտ և կանոնաւոր, բոլոր մուտքերը եղած են համա յունուարի 1916 թ. Ցայսորդն է տասն և ութը հազար վեց հարիւր քառասուն Վարկի Ընկերութեան մէջ № 275 գրքոյքով 9468 ր. 32 կ., Ռոստով-Նախիջ. Փոխ. Վ. Ընկե 645 ր. 73 կ. և առձեռն ծախսելի գումար վանքի գանձարանում 925 բուբ. 20 կ. Այս

Հաշուեքննիչներ՝ Յ. Քիստեան,

ՀԱՇԻՒ 1915 թ. ԵԼՔ

	1915 թ. հաշուետուութեան տարեշրջանում Ս. Խաչ վանքը ունեցել է ելք.				
1	Ռոճիկներ՝ ա) Վանահօր	625	—		
	բ) Ծառայողներին	1819	50		
	գ) Տօնական նուէրներ երգիչներին և ծառաներին	115	50		
2	Մնուն՝ ա) վանահօր, ծառայողներին և հիւրերին	971	20		
	բ) Կեր կենդանիներին	459	20		
3	Դիւանական և եկեղեցական մատեաններ	85	19		
4	Այլ և այլ ծախք (պայտառին, կառքի, սառոյցի, փոստի, օճառի, ամանեղէն և այլն)	274	58		
5	Վառելիք և լուսաւորութիւն	126	73		
6	Նորոգութեան (եկեղեցու, ծառաստանի, շէնքերի և այլն	726	61		
7	Մոմ և խունկ	200	—		
8	Օրավարձով աշխատողներին	72	—		
9	Մի կով	150	—		
10	Տելեֆոն, հողային հարկ շէնքերի ապահովագրութեան	472	13		
11	Նպաստներ՝ Ն.-Նախիջևանի Թեմական Դպրանոցին	3500	—		
	Հայկական լազարէթին	690			
12	Հանգուցեալ Տ. Վահան վարդապետի բժշկութեան և թաղման	633	79		
13	Նոր վանահօր ճանապարհի և իրերի փոխադրութեան ծախս.	150	—	11081	23
	Մնացորդ առ 1-ն յունուարի 1916 թ.				
	Ռոստ.—Նախ. փոխ. Վ. Ընկ. մէջ ընթ. հաշ	7600	87		
	Ն.-Նախիջ Փոխ. Վ. Ընկ. մէջ ընթ. հաշ.	9468	32		
	Ռոստ. Բ Փոխ. Վ. Ընկ. մէջ ընթ. հաշ.	645	73		
	Առձեռն գումար վանահօր մօտ	925	20	18640	12
	Ընդամենը			29721	35

Վանական կառավարութեան հաշուամատեանները և 1915 թուի տարեկան հաշիւը գտանք, ձայն պայմանագրերի, ծախսուած գումարները ունին իրենց ապացուցագրերը։ Առ 1-ն բուբլի 12 կոպ. (18640 ր 12 կ.)։ Այս գումարից գտնւում է Նախիջևանի Փոխադարձ բութեան մէջ № 1132 գրկ. 7600 ր. 87 կ. և Ռոստովի Բ. Փոխ. Վ. Ընկ. մէջ № 242 գրք. հաշիւների մէջ մնած չէ 1915 թ. փոխադարձ վարկի ընկերութ. ստացուած տոկոսները։

Մ. Աղահիմեան և Գ. Սուրաշեան։

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մուտք			
1	Ապառիկ նախկին տարիներից մնացած	1500	
2	Ակսեօնովից (տնկարանի տեղից)	150	
3	Մաժունկովից (բանջարանոցից)	450	
4	Քայալեանից (պարտէզից)	800	
5	Սվիրեպուլօից (քարհանքից)	600	
6	Ռամմից (տնկարանից)	1270	
7	Տրապիզոնցեանից (ագարակից)	453	
8	» (արոտատեղից)	800	
9	Գոգաժից	65	
10	Ամարանոցներից	1200	
11	Վարելահողերից	2800*)	
12	Մոմավաճառութիւնից	1000	
13	Գանձանակից	40	
14	Գաթ, մածուն, հաւկիթ	200	
15	Նուէր, լուսագին, պոտատական այլ և այլ մուտք	72	
16	%% դրամագլխի 1915 թ.	847	58
17	%% դրամագլխի 1916 թ.	618	—
	Ընդամենը	12965	58

*) Այս գումարը կապառուի հողերի մի մասը սեպհական միջոցներով մշակումից և արօտատեղերից։

Նախագահ

Ընդամենը

Անդամ գործավար

1916 թ. ԵԼՔ

1	Ռոճիկ վանահօր	900	
2	» ծառայողների տնտես—դպրին	540	
	» պարտիզպանին	300	
	» գրսի գիշերապահին	180	
	» ներսի գիշերապահին	180	
	» Թոնարարուհուն	198	
	» դռնապանին	180	
	» լուսարարին	120	
	» վանական կառավարութեան ծառային	60	
	» ծառաներին նախաճաշի փող	90	
	» դաշտի պահապանին (խոռուճի)	120	
	Նուէրներ տօներին, երգիչներին և ծառաներին	116	
3	Մոմի և խունկի	400	
4	Վառելիք և լուսաւորութիւն	500	
5	Սնունդ վանահօր և ծառայողներին	1200	
6	Անասուններին կեր	500	
7	Սեղանի սարք օ խոհանոցի պիտոյք	100	
8	Կառքի նորոգութեան, ձիերը պայտելու և այլ պէտքերի	200	
9	Ծաղկոցներին և մշակագործութեան	200	
10	Սառույցի և այլ ծախք	350	
11	Կալուածական ծախք և ապահովագրութեան	260	
12	Հեռախօսի	206	
13	Նպաստներ Դպրանոցին	3500	
	» ճեմարանին	500	
	» դպրոցական ֆոնդին	1000	
14	Նորոգութեանց	1000	
15	Դիւանական ծախք (տպագրութեան և մատեանների)	75	58
	Ընդամենը	12965	58

Մուշէ վարդապետ

Ա. Դերիջանեան
Մ. Շապուխեան
Յ. Սագիրեան

Ս. Զաքարաշեան

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011609

ACADEMIA DE BRASIL
1955